Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

08 հոկտեմբեր 2024թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Էդուարդ Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-23/24» ծածկագրով հրապարակված մրցույթի գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար խեժի (կատիոնիտ) ձեռք բերման նպատակով 2024թ. սեպտեմբերի 24-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-23/24» ծածկագրով գնման ընթացակարգի թիվ 1 չափաբաժնի համար ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Խիմմաստեր» ՍՊԸ-ն:

Մասնակցության հայտերի ուսումնասիրման արդյունքում «Խիմմաստեր» ՍՊԸ-ի հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ գնման ընթացակարգի հրավերի նկատմամբ: Գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 41-րդ կետով «Խիմմաստեր» ՍՊԸ-ին առաջարկել է շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

«Խիմմաստեր» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է իր կողմից առաջարկվող ապրանքի նոր տեխնիկական բնութագիրը (շտկումը), որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար և համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 42-րդ կետի մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետով սահմանված է.

«Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը»:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա. ենթակետը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով

ՈՐՈՇԵՑԻ

1. «Խիմմաստեր» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը և «Խիմմաստեր» ՍՊԸ-ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**